# Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց։ Իր մահկանացուն կնքեց ականավոր գիտնականմանկավարժ, ՀԳԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Էդուարդ Բագրատի Աղայանը։ Չնայած պատկառելի տարիքին՝ վաստակաշատ գիտնականը դեռևս գանվում էր գործունեության բուռն վերելքի շրջանում, աշխատում էր երիտասարդական ավյունով։

Է. Բ. Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին, Մեղրիում։ Նախնական կրթությունն ստացել է տեղում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում։ 1941-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1945-ին՝ դոկտորի գիտական աստիճան։ 1946-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում, 1953-ին նա ընտրվել է ՀԳԱ թղթակից անդամ, 1982-ին՝ իսկական անդամ։ 1980-ին և 1985-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր էր։ 1939 թվականից Է. Բ. Աղայանը դասավանդել է Երևանի պետական համալսարանում, իսկ 1956—85 թթ. եղել է ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, միաժամանակ ղեկավարել է նաև համալսարանի հայագիտական կենտրոնը, ՀԳԱ լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը։ Երկար տարիներ նա աշխատել է որպես բուհերի բաժնի վարիչ (լուսավորության նախարարությունում), լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, պետական համալսարանի պրոռեկտոր (գիտության դծով), բանասիրական ֆակուլտետի դեկան։

Է. Բ. Աղայանը սիրված դասախոս էր և հմուտ մանկավարժ։ Լեզուների իմացությունը, լեզվագիտության անցյալի ու ներկայի նվաճումներին լավատեղյակ լինելը մեծապես օգնել են նրան Հայաստանի տարբեր բուհերում բարձրորակ դասախոսություններ կարդալու ընդհանուր լեզվաբանության, լեզվաբանական ուսմունքների պատմության, լեզվաբանության ներածության, հայերենի համեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, գրաբարի, լատիներենի, պարսկերենի, արևելյան բանասիրության հարցերի շուրջ։

Բեղուն ու արգասավոր էր գիտնական Աղայանի գրիչը, բազմաբան էին նրա գիտական հետաքրքրությունները, լայն էին նրա հետազոտությունների շրջանակները՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, համեմատական, պատմական և նկարագրական քերականություններ, բառագիտություն (բառաքննություն և ստուգաբանություն), բառարանագրություն, հայ բարբառագիտություն, լեզվաբանության պատմություն և այլն։

Վեհանիստ կոթող է նրա «Արդի հայերենի բացատրական բառարանը»։ Գիտության մեջ ծանրակշիռ ներդրումներ են նաև նրա «Լեզվաբանության ներածություն» բուհական դասագիրքը, «Գրաբարի քերականությունը», «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը», «Տերմինագիտությունը», «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատորյակը և այլ արժեքավոր մենագրությունները։

Արգասավոր է եղել Է. Բ. Աղայանի գործունեությունը նաև գիտական կադրերի պատրաստման ընդգավառում։ Նրա ուշադիր ու հոգատար ղեկավարությամբ ուսումնառության ուղի են անցել մի քանի տասնյակ ասպիրանտներ, որոնք այժմ գիտության թեկնածուներ (դոցենտներ) ու դոկտորներ (պրոֆեսորներ) են։

Դժվար է հավատալ, որ այլևս չենք տեսնի գիտության մեծ երախտավորին՝ դեպի համալսարան տանող ճանապարհի մայթով քայլելիս՝ խորհրդավոր ծխամորճով, բարի ու խոհուն հայացքով, հպարտ կեցվածքով։ Բայց համոզված ենք, որ համաշխարհային անուն վաստակած գիտնականի և պայծառ ընկերոջ հիշատակը վառ կմնա հայ մտավորականության, հայոց լեզուն ու մշակույթը սիրող յուրաքանչյուր քաղաքացու սրտում։

Հայաստանի գիտությունների ակադեմիա
ՀՀ բարձրագույն կրթության և
գիտության կոմիտե
Երևանի պետական համալսարան